ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

REPUBLIC OF ARMENIA
DEPARTMENT OF STATE PROPERTY MANAGEMENT BY THE GOVERNMENT
"AUCTION CENTER" State Not Commercial Company

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
УПРАВЛЕНИЕ ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ
ПО УПРАВЛЕНИЮ ГОСУДАРСТВЕННЫМ ИМУЩЕСТВОМ

N 08-168 «10» մարտի 2014թ.

Հաստատված է
«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 » ծածկագրով
շրջանակային համաձայնագրերով
գնումներ կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. մարտի 10-ի թիվ 7 որոշմամբ

ՀՐԱՎԵՐ

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար
վառելիքի ձեռք բերման

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Դ.Անհաղթի 23 հասցեով, մինչև 2014թ. մարտի 20-ը, ժամը՝ 14:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ստեփան Մեջլումյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

375012, ք.Երևան, Դ.Անհաղթի 23, հեռ. (3741) 23-73-00, 24-55-50
375012, Yerevan, D.Anhakht 23, tel. (3741) 23-73-00, 24-55-50
375012, г.Ереван, Д.Анахт 23, тел. (3741) 23-73-00, 24-55-50

Հայտերը կբացվեն *«Աճուրդի կենտրոն»* ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Դ.Անհաղթի 23 հասցեում, 2014թ. մարտի 20-ին, ժամը՝ 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերումը:

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վառելիքի մատակարարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում **ըստ հավելված Ա**, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ **ըստ հավելված Բ**: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ auction.center@mail.ru

Հեռախոս՝ (010) 24-84-74

Պատվիրատու՝ *«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝* *Լ.Գրիգորյան*

375012, ք.Երևան, Դ.Անհաղթի 23, հեռ. (3741) 23-73-00, 24-55-50
375012, Yerevan, D.Anhakht 23, tel. (3741) 23-73-00, 24-55-50
375012, г.Ереван, Д.Анахт 23, тел. (3741) 23-73-00, 24-55-50

Հավելված Ա
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 » ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պատվիրատու կազմակերպության անվանումը-ի կողմից N «*Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ–ՇՀԱՊՁԲ-*11/20»ծածկագրով

հայտարարված ընթացակարգի_____չափաբաժնին (չափաբաժիններին)[1]
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____»_____ 20..թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված Բ
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 » ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեքի հաշվարկ		Առաջարկված գինը /տառերով և թվերով/ /մեկ միավորի/
		Ինքնարժեք	ԱԱՀ-ն*	
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
...	...			
...	....			

Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-11/1 «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան <«___>> _____ 2014թ

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Լ.Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<_____>> -ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____ (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված վառելիքի /այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին կտրոնի ձևով:
2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝
3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,
3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.
ա) Չընդունել Ապրաքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել սույն Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,
բ) Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը,
3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո

ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.4 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը,

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

3.2 Գնորդը պարտավոր է.

3.2.1 Կատարել Պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

3.3.3 Գնորդից պահանջել հատուցելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող

հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն Պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:
3.4 Վաճառողը պարտավոր է՝
3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:
3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:
3.4.3 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
3.4.4 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
3.4.5 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
3.4.6 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:
3.4.7 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝_____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20 – ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջը հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2

աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):
6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
6.3 Գնորդը հանձնման–ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման–ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ Պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
7.3 Սույն Պայմանագրի առաջին կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:
7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
7.6 Պայմանգրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար

կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշաժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

բ) սույն Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն Պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ապրանքների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:
9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը և (կամ) վնասն են:
Սույն Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները, և դրանցից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը:
9.5 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքերում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:
9.6 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, 2, 3, 4 հավելվածները, բաղկացած 6 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:
9.7 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ք. Երևան, Դ.Անհաղթի 23 Հ/Հ163518000480 ՀԷԲ Զեյթուն մ/ճ ՀՎՀՀ 02504535 էլ. փոստ: auction.center@mail.ru	Հ/Հ ՀՎՀՀ
Տնօրեն՝ Լ.Գրիգորյան (ստորագրություն)	Տնօրեն՝ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«___» _____2014 թ. կնքված
N __ պայմանագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բենզին ռեգուլյառ	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ^3-ից ոչ ավելի, բենզոյի ծավալային մասը 1%-ից ոչ ավելի, խտությունը՝ 15^{0}C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը՝ 10մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2.7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ- 7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»

ԳՆՈՐԴ

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
Հ/Հ163518000480
ՀԷԲ Զեյթուն մ/ճ
ՀՎՀՀ 02504535
Էլ. փոստ: auction.center@mail.ru

Տնօրեն՝ _____ Լ.Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հ/Հ

ՀՎՀՀ

Տնօրեն՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«___» _____ 2014 թ. կնքված
N___ պայմանագիր

Գնման ժամանակացույց

N ը/կ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՀԱՍՑԵՆ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Չափի միավորը	Միավորի գինը	ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ԸՆԴԱՄԵՆԸ	
					Քանակը	Գումարը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
	«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ **ք.Երևան, Դ.Անհաղթի 23**			Պայմանագիր կնքելու օրվանից երեսուն աշխատանքային օրից հետո		
1	Բենզին ռեգուլյար 91	լիտր		II, III, IV եռամսյակներ 2014թ.	4500	

ԳՆՈՐԴ

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
Հ/Հ163518000480
ՀԷԲ Զեյթուն մ/ճ
ՀՎՀՀ 02504535
Էլ. փոստ: auction.center@mail.ru

Տնօրեն՝ Լ.Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հ/Հ

ՀՎՀՀ

Տնօրեն՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
«____» _____2014 թ. կնքված
N__ պայմանագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N ը/կ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՀԱՍՑԵՆ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ֆինանսավորման գումարը՝ 2014թ. «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին									
	«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ք.Երևան, Դ.Անհաղթի 23	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	**Ընդամենը**
1	Բենզին ռեգուլյար 91	11%	22%	33%	44%	55%	66%	77%	88%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
Հ/Հ163518000480
ՀԷԲ Զեյթուն մ/ճ
ՀՎՀՀ 02504535
Էլ. փոստ: auction.center@mail.ru

Տնօրեն՝ Լ.Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հ/Հ

ՀՎՀՀ

Տնօրեն՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 4
< > _____ 2014 թ. կնքված
N - -

Պատվիրատու	Կատարող
Հասցե	Հասցե
Հ/Հ	Հ/Հ
ՀՎՀՀ	ՀՎՀՀ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>> _____ 201 թ.

Պայմանագրի անվանումը << _____>> գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__>> _____ 201 թ.

(Հանձնայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդը, ի դեմս <<Աճուրդի կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Վաճառողը, ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (համաձայնագրի) կատարման վերաբերյալ <<___>> _____ 201 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կատարողը <<__>> _____ 201 թ. -ից <<__>> _____ 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Ապրանքի համառոտ նկարագիրը	Ապրանքի քանակական ցուցանիշները	Մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն_____	ազգանուն_____
Կ. Տ.	Կ. Տ.